


ԲԱՃՆԵԳԻՆ

Ի Պուլկարիա
Տարեկ. 10 ֆր.
Վեցամս. 5 "

Արտասահման
Տարեկ. 12 ֆր.
Վեցամս. 6 "

Ամերիկա
2 Տոլ. 30 սենդ

ԿԱՆԽԻԿ



ՊԵՏՄԱՆՔ

Գրութիւնքեան
չեն տրուիր:

Հասցէ

DİRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԱԲԱԹԱՅԱՆԴԵՍ. ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵՇՏԱԿԱՆ

— Отговорникъ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, Адвокатъ. —

Դ. ՏԱՐԻ

— ԴԵԿՏ. 9 ՇԱԲԱԹ 1900 —

ԹԻԻ 190

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԳՈՒԻՏՈՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՆՈՐ ԲԱՌԳԻՐԻՔ ՖՐԱՆՍԱԶԱՅ

Պատկերապատր

Հաստի Առաջին Ա—Ե

Սոյն բառգիրքը որ Ն. Ա. Բարձր. Իշխան Լուսին-
եանի երկար տարիններէ ի վեր կատարած ուսումնասի-
րութեանց արդիւնքը կը ներկայացնէ, այս անգամ հը-
րապարակ ելած է 1061 երեսներէ բաղկացեալ: Սա իր
տեսակին մէջ առաջինն է, որովհետեւ գիտական, բու-
սական, ճարտարապետական, բժշկական և այլ ամեն
տեսակ անհամար բառեր պարունակելով, անոնց այլ եւ
այլ իմաստները կը սորվեցնէ ոճերու մանրամասն բա-
ցատրութեամբ և գեղեցիկ պատկերներով: Ֆրանսերէն
և Հայերէն լեզուներուն միանգամայն ծանօթանալ ու
զորներուն համար անհրաժեշտ պէտք մըն է այս: Ամ-
բողջ գործը երկու հատորէ պիտի բաղկանայ: Ա. հա-
տորի թղթակազմին գինն է 25 ֆրանք: Պուլկարիոյ և
Ռումանիոյ մէջ ստանալ փափագողները պէտք է գիմեն
«Հայերի» խմբագրութեան:

ԱԶԳԱՅԻՆ

—

Պարսից Շահը Էլմիսթինի թանգարանին հը-
նութիւնները գիտելու ատեն՝ զարմացմամբ ի-
մացեր է որ Իլման տեղին առջև կախուած ոսկի
կանթեղը Շահ Ագրասի ընծան է վանքին, և
թէ իբր իւղագին այն ատեն հոյ մըն ալ շնոր-
հած էր վանքին: Մուղաֆէրէտտին Շահը 2.500
ֆրանք նուիրած է Դէորգեան ձեմարանին:

—Արուեստահանդէսին առթիւ Պատուոյ Լէ-
գէօնի միջոցով անուանուած է Հունգարիոյ
բաժնին ընդհանուր քովսէրը, Պր. Պէլա տը
Լուքաց, որ իր իսկ խոստովանութեամբ հունգա-
րացի հայ մըն է:

Զօրավար Բիթապօսի խան, ազգայինն ալ, որ
պարսկական բաժնի ընդհ. քովսէր էր, ոսկի մէ-
տալ մը ստացած է իր ցուցադրած պարսկական
չքեղ գորգերուն համար: Այդ գորգերէն մէկը
50.000 ֆրանքէն աւելի կարժէ եղեր:

—Պարսից Ա. Թագուհին, Հազրէթ-ի-Իլիա,
վերջերս Թաւրիզի մէջ իր ներկայութեան ըն-
դունած է Հայուհեաց Բարեգործական Ընկերու-
թեան Գործադիր Ժողովին անդամուհիները:
Թագուհին այդ առթիւ հազած էր մարգարիտ-
ներով ու ադամանդներով զարդարուն շրջազ-
գեստ մը և շրջապատուած էր պալատական վեց
բամբիշներով: Ընդունելութիւնը տեւած է առ-
ջողջ երկու ժամ, որու միջոցին երկու անգամ
թէյ մատուցած են և երեք անգամ ալ պտուղ,
անուշաղէն ու պաղպաղակներ հրամցուած: Թա-
գուհին խոստացեր է որ անդամուհիները Շահին
ալ ներկայացնէ և յիշեցնէ անոր՝ իր տուած
խոստումը—իր բարձր հովանաւորութեան տակ
առնելու Հ. Բարեգ. Ընկերութիւնը:

—Օկիլտտ Թէտօրօվիչ, ծագումով հայ, որ
Լեհաստանի հայերուն վրայ շահեկան յօդուած-
ներ ունի գրած, քարտուղար կարգուեր է Աւս-
տրիոյ կայսերական տան արհիդուքսերէն Բառլ
Ստէֆանի:

—«Լ'Արմէնի»-ին կը գրեն Թիֆլիզէն թէ Հա-
յոց հրատարակչական ընկերութեան փակումը
Թիւրքիայի մէջ արդիւնք կը կարծուի, և
թէ ընկերութիւնը կարող պիտի ըլլայ շուտով
հրաման ստանալ իր գործը վերսկսելու:

«Էջմիածին, հոկտ. 24. — Այսօր Պարսից Շահը այցելութեան եկաւ կաթողիկոսին: Ժամը երկուքն էր երբ հասաւ Երևանէն: Վանքին զանգակները բոլորը միասին սկսան զարնել: Ամենէն առաջ Շահին դիմաւորելու գնաց Երևանի առաջնորդը՝ Սուքիաս եպ. Պարզեան, որ աղ ու հաց մատոյց Շահին, աւանդական սովորութեան համաձայն: Վանքի մեծ դարձիսէն մինչև սաճարի դուռը երկար թափոր մը կազմած կ'սպասէին վանքի միաբանները, Գեորգեան ճեմարանի և Վաղարշապատի դպրոցին աշակերտները, Շահը առաջնորդեցին շքեղ ամպհովանիի մը ու թափորը սկսաւ շարժիլ դէպի առճարը, շարականներու ներդաշնակութեան տակ: Շահին քալելու ճամբան կարմիր չուխա՝ փռուած էր ու ծաղիկներ սփռուած: Իսկ ամբողջ վանքը ծաղիկներով, դրօշակներով ու պատկերներով զարդարուած էր:

Տաճարի դրան մօտ շահին կ'սպասէր կաթողիկոսը, պատուանշաններով զարդարած կուրծքը: Շահն ու կաթողիկոսը իրարու ձեռք սղջեցին, ու վերջապէս հետեւեալ խօսքերով ողջունեց Մուկաֆէրէտինը.

«Վեհափառ տէր: Այսօր բարեպաշտե՛հ ու երջանիկ օր մըն է ինձի և հոմայն միաբանական դասուն համար, պատիւ ունենալով ընդունիլ Ձերդ Մեծութեան շնորհաբեր այցելութիւնը, որ յիշեցնել կուտայ ինձի ձեր արժանայիշատակ հօր, նաորէտոին Շահին երիցս այցելութիւնը՝ Էջմիածնի Մայր Աթոռին: Այսօր բարեբախտ և ուրախ ենք որ անոր արժանաւոր և թագակալ ժառանգորդք նոյն այցելութեամբ աւելի ևս կը փառաւորէ այս հնօրեայ հաստատութիւնը, որուն հիմնադիրը մեր ազգին լուսաւորիչ հայրն է, որ ասկէ 1600 տարի առաջ հաստատած է Էջմիածինը, որ աստուածային տնօրինութեամբ կոչուեցաւ լուսաւորելու հայոց աշխարհը աստուածգիտութեան լուսով:

Ուստի բոլոր միաբանական ուխտին հետ կ'սղջութենք Աստուծու աթոռին առջև, որ երկար օրեր պահէ Ձեզի Մեծ Իրանի թագստորական գահուն վրայ, և Ձեր Մեծութեան բոլոր բարի դիտաւորութիւնները կատարէ. Աստուած Պարսից հարուստ աշխարհին բարգաւաճում և առաջդիմութիւն պարգևէ, որպէս զի երկրին համայն ժողովուրդը և հպատակ հաւատարիմ հայ ազգն ալ վայելէ նոյն փառաւոր իրաւունքն ու արդարութիւնը: Ամէն:»

Կաթողիկոսին խօսածը պարսկերէնի թարգմանեց լաշիկ Վ. Խաղեան:

Շահը կաթողիկոսին ընկերակցութեամբ պըտրտեր է տաճարին մէջ և մեծ հետաքրքրութեամբ դիտեր է թանգարանի հնութիւնները: Տաճարէն ելլալով, նոյն հանդէսով առաջնորդուեց

է Վեհաբան: Նոյն միջոցին Վաղարշապատի ալջ. դպրոցի վարժուհին անդնադործ բարձ մը նուիրեր է Շահին, պղտիկ աղջիկ մըն ալ՝ փունջ մը ծաղիկ: Ճեմարանի երգեցիկ խումբը այս անգամ ֆրանսերէն երգեր սկսաւ երգել Կոմիտաս վարդապետի առաջնորդութեան տակ: Վեհաբանի սանդուղէն վեր ելած ատեն գերման փրօֆէսոր մը շահին լուսանկարը հանեց:

Վեհաբանին բոլոր սենեակները թանկագին գորգերով ու պատկերներով զարդարուած էին, Շահին համար շքեղ գահլիճ մը պատրաստուած էր յատուկ, պարսկական ճաշակով: Ճով սեղան մը տրուեցաւ Շահին և իր հետեւորդներուն: Ժամու մը տեսակցութենէ ետք, երբ Շահը կը պատրաստուէր մեկնելու, իր ձեռքով կաթողիկոսին պարանոցէն կախեց Արեւ և Առիւծ պատուանշանին ականակուռ առաջին աստիճանը:

Շահը շատ գոհ մնաց գտած ընդունելութենէն և հմնգ անգամ կաթողիկոսին ձեռքը սեղմեց իր գոհունակութիւնը յայտնելով: Իր հետեւորդները, որոնց մէջ կային քանի մը նշանաւոր հայեր, կը պատֆէին թէ Ողջսիոյ մէջ ոչ մէկ տեղ այնքան սիրալիր ու փառաւոր ընդունելութիւն եղած չէր Շահին:

Ընդունելութեան համար ծախք եղած է մօտ 1500 ռուբլի:

Հայրենիք

— Տեղւոյ Որբախնամի Տիկնանց Ճիւղի Բ. Ընդհ. Ժողովը վաղը, կիրակի պիտի գումարուի աղջկանց Ազգ. վարժարանի սրահը առաջ տեսան ժամը 10ին: Օրակարգըն է «Ընտրութիւն Գործ. Ժողովոյ»: Կը հրահարուին Աղն. անդամուհիք որ փութան իրենց սոյն ազգասիրական պարտականութիւնը կատարել:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԲՐՈՆԵԼԻ

«ՎԷՍԷԼՈ» ԽՈՒՄԲԸ ՊՈՒՐԿԱԶԻ ՄԷՋ

Նոյեմբեր 22 Զորեքշաբթի օրը տեղս հասաւ Վառնայէն «ՎԷՍԷԼՈ» թատերական խումբը և Շաբաթ երեկոյ ժամը 8½ին իր առաջին ներկայացումը տուաւ: Հակառակ հեղեղանման անձրեւին որ այդ երեկոյ անդադար կը տեղարարեթէ ամբողջ նստարանները բռնուած էին հետաքրքիր հաւարակութեան մը կողմէ: Ա. ներկայացման նիւթն էր Օձի բոյնը կամ Անմեղ հովիւը, որ յայտ լաւ ընդունելութեան մը և բուն ծախահարութեանց աշխատացաւ: Իսկ Բ. ներկայացումը տեղի ունեցաւ կիրակի երեկոյ, «50 հազար ֆրանքնոց պարտավորահալը», որ դարձեալ հակառակ աննպաստ օրին հոծ բազմութիւն մը իրեն բաշած էր: Նոյնքան եւ աւելի յաջող անցաւ այս երկրորդ ներկայացումն ալ եւ գնահատուեցաւ օտարազգի (Պուլկար, Կոյն, Հրեայ) հասարակութեան կողմէ:

Տեղւոյ Պատկերական խօսքով և Հոգաբարձ.

անդամը ղեկավարի նպատակով արժարանին ներկայացումը մը տալ, զիմում ըրած էին «Վէսէլօ» խումբին, որ ամենայն յօժարութեամբ հաւանութիւն տուած էր Գ. Ե. օրուան համար նոյն իսկ իրենց մեկնելու յետաձգելով և զոհողութիւն ալ յանձն առնելով: Չնայելով 1-2 օրուան կարճ միջոցին, պաշտօնական և քաղաքի մէջ իրենց գործունէութեամբ ծանօթ անձնաւորութիւնը յաջողեցան ըստ բաւականին տոմսակ սպառել և թատրոնը քաղաքիս առաջնակարգ անձնաւորութիւններով լեցնել, այնպէս որ շատեր յօտնկալս հանդիսատես ըլլալ ստիպուած էին՝ տեղոյն անձկութեամբ պատճառաւ: Ներկայացումը ղեկավարի ըլլալով Տեղւոյս զօրաբանակի հրամանատարը բարեհաճած էր ձրիաբար զրկել նուագախումբը և իր ներկայութեամբ պատուել ներկայացումը:

Խաղի նիւթն էր «Խղճի խայթը» չորս արարուած և վաւերացող յորոնց ներկայացուցած միջոցին, ճախահարութեանց մէջ կը զգորգացնէին թատրոնը, և և կին ու կրկին անգամներ ի տես կը հրաւիրէին դերակատարները:

Կարելի չէ չլիշատակել Տիարը Պապանեանի, Պէնիանի, Երամանի և Յակոբեանի յաջողակութիւնը ու բնական շարժումները իրենց ստանձնած դերերուն մէջ. որոնք պատիւ են Հայութեան՝ մանաւանդ օտար երկիրներու մէջ: Մասնաւոր շնորհակալութեան արժանի է նաեւ իրենց ցոյց տուած անշահախնդրութիւնը և վեհանձնութիւնը ի նպատակ արժարանի տրուած ներկայացման առթիւ, որոնց նմանը գրեթէ ցարդ տեսած չէ եղիւ Պուրկազը:

Շնորհակալութեան արժանի է նաեւ Տեղւոյս մի քանի անձնաւորութեանց ցոյց տուած եռանդը ի նպատակ ղեկավարի գործոց, որոնց վրայ գրել տարբեր առթիւ մը կը վերապահենք:

«Վէսէլօ» խումբը. յաջորդ առաւօտուն իսկ մեկնեցաւ Ֆիլիպէ, ուր պայմանաւորուած է արդէն, առանց յագեցնելու քաղաքիս թատրասէր հաճարակութեան փափաքը որոնք դեռ նոր կը պատրաստուէին վայելել իրենց ներկայացումները:

Յաջողութիւն և բարի վերադարձ կը մաղթենք իրենց:

ԱԿԱՆԱՏԵՍ

ԹԱՏՐՈՆ ՍԱՆԴՐԱԼ

Դեկտ. 9 Հարաւ Յերկոյ ժամը 8ու կէս: Ներկայացումն «Նովա Զվեզա» հայ դերասանական խմբին: «Վհուկը» կատակախաղ 4 արարուած, խիստ ծիծաղաշարժ դաւեշտ մը: Միջնարարներուն իտալական երգեցիկ խումբը երգեր և պարեր պիտի յօրինէ: Կիրակի գիշեր «Սէր առանց համարման» թատերախաղ 5 արարուած:

ՅԵՐԵՎԱՆ

Աժանս Բոժոժիկ և Ընկ.



(Հրեղէն Սուրհանդակով)

Թոնքին

Եկեղեցւոյ ներքին պայտօնեայն տեսնելով որ հալառակ իր ըրած կրկնակի զեկոյցներուն պէտք եղած խունկը չառնուիր, ճարահատեալ ժամկոչին ձեռքովը սկսաւ 10ական փարայի խունկ բերել տալ քեզի պախալէն:

Պիմանիա

Մեր ժամկոչն ալ՝ իր չորս ամսականներուն անդանձելութենէն ստիպեալ տանը լուացքին կաթսան և անկողինին բուրդերը խռոռ խառնվելի մը ծախելով, հացագործին հաշիւը մաքրեց, ի փառս և ի գովեստ ազգային պաշտօնէութեան:

Մօզանպիք

Մեր դպրապետը երբեմն քահանայի պաշտօնն ալ կը կատարէ, երբ ալ վերջինը «Երկրաշարժ և Հաւատով» խառն թապալս պտտցունելու կելէ, դպրապետը ժողովուրդին դառնալով «Ասացէք մեզայ Աստուծոյ. Աստուած թողութիւն շնորհեցէ» կը գոչէ:

Իսլանտա

Զուկներու տէր հայր մը՝ տանը մէջ գլխաւորած մէկ քանի կտոր աղամանդեղէնները մաքրել տալու պատրուակաւ զանոնք տարաւ յանձնեց... շանթէօզի մը:

Քամալթա

Հարսնիքի մը մէջ քատրիլի ատեն պարոն մը շանթէ սէ ճաւի միջոցին անանկ ուժով գլուկեց իրեն վիզայի տաման, որ այս վերջինը պարտաւորեցաւ շառաչաձայն ապտակով մը օձիքը անոր ձեռքէն ազատելու:

Ըսին թէ պարոնը երկու օր տունէն դուրս չէ ելեր և դէմքին հառցայ յարասի կապեր է, ապտակէն առաջ եկած ուռեցքը դարմանելու համար:

Աստուած ապաշխարանք համարէ:

ԳԵՂԵՑԻԿ ԽՕՍՔԵՐ

Ուրիշին խրատ տուող ու ինք չի պահողը կը նմանի այն կօշկակարին որ ամենուն կօշիկ կը կարէ ու ինքը բոլորիկ կը քալէ:

Վօրթեռ.

Ոչ թէ տարիքով մեծ ըլլալն է գովելի, այլ իմաստութեամբ ծեր ըլլալն է:

Վ. Հիւկօ.

Առաքինութիւնը եթէ թշնամիներնուս վերայ տեսնենք՝ պէտք է պատուենք: մոլութիւնը եթէ բարեկամներնուս վրայ տեսնենք՝ պէտք է ատենք:

Մոլիեռ.

Աղքատութիւնը շատ բանի կարօտ է. ագահութիւնը՝ ամեն բանի:

Ռասին.

Անհաւատարմութեան բնակարանը անուշ և շողորքօրդ լեզուին տակն է:

Արիստոսէր.

Մինչև երեսուններորդ տարին կամքը կը տիրէ. անկէ մինչև քառասուններորդ տարին՝ հանճարը, անկէ ալ ետքը դատողութիւնը:

Տիսթո.

Սուտ բարեկամը ստուերի կը նմանի, երբ արեգակը ելլէ՝ կերևի, իսկ երբ օդը ամպոտ ըլլայ՝ ան ալ անմիջապէս կաներեւութանայ:

Ռեշարմ.

Խօսքը մինչդեռ բերանդ է, քուկդ է, երբ անգամ մը խօսիս՝ ուրիշինն է:

Ս. Զ.

Ան որ չորս կը վաստկի և հինգ կը ծախսէ քսակի պէտք չունի:

Ա. Տիւմա.

ՇՈՂՈՔՈՐԴՈՒԹԵԱՆ ՅԱՂԹՈՆԱԿԸ

Ամեն մարդ գիտէ նորաձեւութեանց մեծ վաճառատուններուն մէջ յաճախակի պատահածը. այն է չծախուած ապրանքները առանձնաշնորհեալ գիներով օժտել: Յաճախորդ մը իր գնումը ընելէն ետքը մեկնելու պահուն անոր կառաշարկէն գնել այդ քաղիօն ապրանքը, հազար պերճախօսութեամբ գովելով անոր գիմացկունութիւնը ևն. կան յաճախորդներ որ խանութպանին շողորքօրդութենէն չեն խաբուիր, կան ալ որ քթերնուն կը բռնուին, Այսպէս եղաւ վեր-

ջերս մեծ վաճառատան մը մէջ ուր մնացած էր գազմիր մը բոլորովին անխորժ գունով ու բժաւորումով: Խանութին պաշտօնեաները չէին յաջողած նոյն իսկ սուսուած գինովը ծախել այդ ապրանքը: Վաճառատան մէկ գրագիրը, չարախո մը, ամեն անգամ որ գազմիրներու դարանին առջևէն կանցնէր, յանդիմանութիւններ կ'ուղղէր գազմիր ծախող տղուն անճարալութեանը դէմ: Արդ, օր մը յիշեալ գրագիրը իրացաւ տղուն սապէս ըսելը. «Թող ինք ծախէ նայինք, պօյը տեսնանք» ու սշատասխանեց. «Եթէ լաւ իմացայ, դուք զիս անկարող կը կարծէք այս կերպաւ ծախելու, այնպէս չէ»:

— Բայց ո՛չ պարոն, ըսաւ պաշտօնեան շուտաւ. կ'ապահովցնեմ ձեզ թէ բան մը չըսի:

— Այո, այո, դուք այս կերպաւ անվաճառելի կը կարծէք, շատ լաւ, կեցէք գործս լըմնցնեմ ու գամ ձեզի ցուցնել թէ ի՞նչպէս կը ծախեն ասիկա: Լուստուրի մէջ, գործը՝ յաճախորդին չի հաւնած ապրանքը ծախելն է»:

Բանի մը վայրկեան անցնելէ ետքը օրիորդ մը վաճառատուն մտաւ կերպաս առնելու համար: Գրագիրը աճապարեց պաշտօնեային տեղը անցնիլ և քանի մը ծրար կերպաս վար իջնցնելէ ետքը քաղիօն ալ վար առաւ: Վաճառատան բոլոր պաշտօնեաները աչքերնուն մէկ ծայրովը անոր առուտուրը կը դիտէին:

Օրիորդը երբ վերջին ծրարը տեսաւ, դէմքը թթուեցուց. — Հէ՛, ըսաւ քաղաքավարութեամբ, այս ապրանքը գէշ չէ, սակայն իսկապէս գեղեցիկ ապրանք մը չ'ունիք:

— Ի՞նչպէս չունինք, պատասխանեց գրագիրը, ու վեհանձնութեամբ անոր աչքերուն առջև հայելի մը դնելով յարեց. ահաւասիկ ինչ որ մենք այսօր ունինք իբրեւ ամենազեղեցիկ ապրանք մեր վաճառատան մէջ:

Օրիորդը ժպտեցաւ, յայտնապէս շողորքօրդուած, ու հինգ վայրկեան ետքը վաճառատունէն մեկնեցաւ թեկն տակ ունենալով նոյն քաղիօն ծրարէն կտրուած չըջաղեցողի մը կերպաւ:

Թարգմ.

ԼՍՏԳ

ԾԻԾԱՂ

Գրիգորիկ իր հօրը կը հարցնէ.

— Հայրիկ, ինչ տարբերութիւն կայ սովորութիւն և մոլութիւն բառերուն մէջ:

Հայրը. — Սովորութիւնը, տղաս, մեր գործած յանցանքներուն կըսենք, իսկ մոլութիւնը ուրիշին յանցանքներուն:

Փողոցին մէջ երկու բարեկամներ

—Ուր կերթաս.

—Դուն ուր կերթաս.

—Ես ուր երթալս չեմ գիտեր.

—Անանկ է նէ ես ալ ետեւդ կուգամ կոր.

Փաքրիկն Մելքոն իր հօրը.—Հայրիկ, այսօր գետնէն ֆրանք մը գտայ.

Հայրը.—Հարկաւ իր տիրոջը վերադարձուցիր զայն:

Մելքոն.—Այո՛, հայրիկ.

Հայրը.—Շատ աղէկ ըրեր ես տղաս.

Մելքոն.—Ուրիշ կերպ չէի կրնար ընել. ինչու որ անոր տէրը հինգ—աղբար (ապտակ) մը ցուցուց ինծի, ես ալ վախէս տուի:

Իւղոսած ապակիները մաքրելը.—Ամեն մարդ գիտէ իւղոսած ապակիները մաքրելու դժուարութիւնները. նախ առէ՛ք սոխ մը և զայն լաւ մը ճզմելէ ետքը լաթով մը ապակիներուն քսեցէք, յետոյ աճառաշրով սրբեցէք որ սոխին հոտը առնէ: Արդիւնքը անմիջական է:

ՈՒՅՏՈՒՐՄԱՍԻՕՆ

ԶԻՅԱՓԷԹ

Պիւր գեղտեմբերին Զընճը կէճէսի սաաթ 8 պուշուգտա՝ վառնանըն եէնի մահալլէ ճիւղարըն տա տէհէթլի սուրէթտէ ըիւղկեար իլէ գար եաղմագտա օլուպ, հէր քէս խանէսինէ չէթիմիշ, սօպանըն էթրաֆընտա ըսընմադտա իտի:

Սօդագլարտա ինսանտան էսէր կէօրլւնմէյիպ, եալընըզ կէճէ պէքճիսինին աղըր աղըր ատըմլարընըն վէ պաղէն թաշլարըն իւղէրինէ վուրտուլու սօբասընըն սէսի իշիտիլմէքտէ իտի:

Պու արա՝ բալթօտունուն իշինէ էյիճէ սաւըլմըշ պիւր շախս՝ քաշ եօջու ճատտէսինտէ կէօրիւնտիւ: Մէրգում ատըմլարընը կայէթ սիւրաթլէ ալըպ, զիքր օլունան եօլուն ծիւնճի բլանընա վարտըղընտա՝ սաղա տօղլու տէօնտիւ վէ բարմագլըզլը պիւր հալլունուն գաբուսու էօնիւն:

տէ տուրտու: Պիւր տիւրլիւ գաբույու վուրմաղա ճէսարէթ իտէմէյօր իտի իսէ տէ՝ տէրէճէսիզ սօղուգ սէպէպիլլէ թիւրիլ թիւրիլ տիթրէմէքտէ օլտուղունտուն՝ գաբույու իքի իւշ տէֆա սարստը: Խանէնին բէնճիթլինտէն պիւրինին բէրտէսի աշըլըպ պիւր կէնճ գըզ սըֆֆաթը կէօրիւնտիւ. Շախսը մէրգում գաբույու պիւր տէֆա տահա սարստըգտա՝ խանէ գաբուսու աշըլըպ, էլինտէ պիւր պէզ պուլունտուղու հալտէ մէլայիք կիպի 16—17 եաշընտա պիւր գըզ հալլույա չըգտը:

—Նէ՛ էսքէն կէլտին պուէ Գէոզ.

—Նասըլ էրքէն, քալէ՛, սաաթ սօգուղու կէշտի:

—Պուէ կիւլիւմ, պիլիյօռում ամա՝ սէն բաթէռամըն թապիյէթինի պիլմէ՛զմիսին. հիշիճիք էրքէն եաթա՛ն մը:

—Ամա շիմտի օնուն իշին տինտէն իմանտան չըգարըմ հա՛:

—Սո՛ւս, եալաս սէօյլէ. միթէռամտան գօրգմայօրում ամա՝ բաթէռամ գաֆամը սօղանա չէվիւրի:

—Աման պա՛արի շու էլինի վէ՛ր տէ պիւր աղ ըսընայըմ:

—Իւշիւյօ՛րմուսուն պուէ:

—Սէն իւշիւմէյօ՛րմուսուն քալէ՛:

—Հըհ, նէ՛ իւշիւյէճէմ, հէր քէս համամտա չըպլագ կէշիյօր:

—Պապանըն եաթմասընա չօգ պէքլէյէճէ՛քմիլիմ, սօղգտան տօնաճարմ:

—Սէնի նէ՛րէյէ սագլայըմ պուէ, հէր եէրիմիզ տէ պէլլի:

—Նէ՛րտէ իսթէրսէն օրտա սագլա:

—Օտունլուղա ինէճէքսին:

—Նէ՛, օտունլուղ մը՝...

—Նէ՛ եաբաճարն. գաթլանմալը:

—Էվլէթ, գաթլանմալը — տէյուպ պիզիմ Գէորդ օտունլուղա էնտի:

—Հիշիճիք սէս չըգարմայասըն. պապամ եաթար եաթմաղ կէլիւրիմ:

Պու արա տըշարտան—«Մօրի Բարաշքէվի՛, մօրի Բարաշքէվի՛ տէյու պիւր սէս իշիտիլէրէք, գըզ օտունլուղ գաբուսընը գաբայըպ հէման էվտէն իշէրի կիրտի:

Պլագալըմ քի խանէ տէրունինտէ պուլունանլար գօնուշսունլար. պիզ՝ օտունլուղտա թիւրէմէքտէ օլան Գէորգուն եանընա կիտէլիմ:

Տէլիգանլը երէյի վազըթ պէքլէտիքտէն սօնրա՝ օտուռնլարն իւզէրինէ պիրազ ուղանմա-
ղա մէծպուր օլտու. պիր չէյրէք սաաթ կէշտիք-
տէ՝ օտուռնլուգ դաբուռու աչըլտը. Տէլիգանլը՝
կէլինի Բարաշքէվի. զանն իտիւպ՝ անըն իսմինի
վէրէճէյի տազըգատա՝ եաշլը պիր գաաընըն
էօքսիւրմէսինի. իշիթտի. Մէրգումէ գատըն Բա-
րաշքէվինին վալիտէսի օլուպ, սօպա իշինն պիր
գաշ օտուռն ալմաղա կէլմիշ իտի. Գէորգ օլտու-
ղու եէրտէ պուլթ քէսիլիպ, եազայը էլէ վէրմէ-
մէք իշինն նէֆէս ալմաղա պիլէ ճէսարէթ իտէ-
մէյօր իտի Գատըն՝ գարանլըգտա (չլւնքիւ էլին-
տէ պուլունան մուլ ըիւզկիարտան սէօնմիւշ ի-
տի) իլէրի վարմայըպ, գաբուլա եազըն եըղըն-
թըտան պիր գաշ օտուռն ալտըգտան սօնրա՝ եօ-
գարը չըգտը կիթտի. Տէլիգանլը սւղուն պիր
նէֆէս ալարապ, քէնտի քէնտինէ տէտի. —Շիւ-
քիւր, զուրթուլտուգ, եարը՝ սուրք ասվաաղի-
նէ պիր մուլ եազայըմ:

Նիհայէթ, սաաթ օնա տօղըւ, էվին իշինտէ
հէր քէս եաթաղգտան սօնրա, դաբու աչըլտը
վէ պէօյիւք պիր շալա պիւրիւնմիւշ օլտուղու հալ-
տէ Բարաշքէվա տըշարը չըգապ պօղուգ պիր սէս
իլէ Գէորգու եօգարը չաղըրտը. Պէշ տազիգա
սօնրա պու իքիսի Թաշ եօլունտան Մուսալլայա
տօղլու իլէրուլէմէքտէ իտիլէր:

—Գէորգ պիրէ, ցօգ մուսաֆիրլէր վա՞ն մը.

—Կէօրմէլիսին մօրու, հէվի թանըտըղա-
րըմը օրտա. կիւզէլ պիր զիյաֆէթճիք եաբա-
ճաըլ:

5679 նօմէրօլու խանէ գաբուսընա եազլաշ-
տըգտա՝ տէլիգանլը ճէննէթի կէօրմիւշ կիպի
սէվինէրէք՝ գաբուլա վուրտու. Գաբու աչըլըպ՝
պիր չօգ տէլիգանլըլար վէ գըղլար պուլնլարը
գարշըլատըլար վէ պէօյիւք պիր օտայա կէօթիւր-
տիլէր: Իշպու օտանըն պիր քէօշէսինտէ պիր
շաքէրինա գօնմուշ օլուպ, լաթէրինաճը՝ անախ-
տար էլինտէ՝ չալմագ իշինն իշարէթէ պէքլէ-
մէքտէ իտի.

—Էքսիք քիմ վար եա պէ:

—Սայ քի հէր քէս թամամ. թէ Գէորգտա
կէլտի:

—Աֆուրղուֆուր նէրտէ գալտը եա պէ:

—Կէլիւ հէլպէթ, պէլքիտէ Գօգօշըլա կէ-
լէճէք:

—Օյնամագ իշինն օնլարա պէքլէյէճէքմիլիպ.

—Հըհ, պայաա, նիշին պէքլէյէճէիլ մօրու,
պիլ պաշլայալըմ. կէլիլէրլէրսէ օյնասընլար:

Օյնամագ իշինն հէր թարաֆտան արղու պէ-
յան օլտուղունտան Թադուր՝ լաթէրինաճըլա պիր
բօլքա չալմասընը էմր էթտի:

Լաթէրինա պաշլար պաշլամաղ՝ օտանըն օր-
թասը օմուգ օմուգա օյունճուլար իլէ տօլտու. չէօյ-
լէ քի գըմըլտանաճագ եէր գալմաղը: Օյուն
վագթը աճէմինին պիրի սըլթ իսթիւ եէրէ սէ-
րիլտի, վէ տամասընըն էլինտէն գալիճէ թուլթ-
մուշ օլտուղունտան՝ մէրգուլէնին տալի տիւշմէ-
սինէ սէպէպ օլտու:

Օտանըն իշինտէ պիր քահքահա տըր գօբտու:

—Ուլան Ղարապիտ, նէ՞ եաբտըն հէյ կի-
տի. պիլմէտիլին չէյէ նէյէ օյնաեօն:

—Պրալա ալլահընը սէվէրսէն, խօրօ-տաս-
ղալօյա պօշունա օ խատար բարա վէրմիշիլս:

—Զարար եօլս, հարըն ունուտուրտուն:

—Եա պու մասխարալըլս... ունուտուրտունը
չէյ մի տիր:

Բօլքա օյունու պիթէր պիթմէշ՝ գաբու ա-
չըլըպ՝ եօգարտա զիքրի կէշտիլիմիլ Գօգօշ իլէ
Աֆուրղուֆուր իշէրի կիրտիլէր:

(Տէլամի)

ԲԵՏԻ ԿԵՕԶԻԻ

ՀԱՆԵԼՈՒԿ

Ապրելու համար արիւնս խմեմ,
Ու աղիքներս ընդ միշտ կը լափեմ:

Ա. լուծողին կը նուիրեմ ծիծաղաշարժ կա-
տակերգութիւն մը:

ԱՍՏՂ

Ա. Զարպհանէլեան գրատան մէջ կը ծախ-
ուին թէ՛ պատի և թէ՛ գրպանի ամեն տեսակ Օ-
րացոյցեր Գիները դիւրամատչելի:

Կուզէ՞ք քերնի համալ ապուխտ և եր-
չիկ ուտել, գիմեցէք ի Մուսալլա Տ. Ագրի Մ.
Կիւմիւշճեանի նպարալաճառատունը, ուր չափա-
ւոր գիներով կը ծախուին առաջնակարգ մաս-
նագետի մը ձեռքով պատրաստուած այս երկու
տեսակ աղանդեղէնները:

Печатница „Взаимность“ — Варна.